ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
աշխատակազմի ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

*ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ*

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

2016թ. դեկտեմբերի 20-ից 22-ը պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում է գտնվելու Ռուսաստանի Դաշնության Մարդու իրավունքների հանձնակատար Տատյանա Մոսկալկովայի գլխավորած պատվիրակությունը: Այցի շրջանակներում նախատեսվում են մի շարք հանդիպումներ, այդ թվում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, պատվիրակության այցի նպատակով, ձեռք է բերել 44.000 (քառասունչորս հազար) ՀՀ դրամ արժողությամբ հուշանվեր՝ իբրև հարգանքի եվ հետագա համագործակցության պատրաստակամության դրսևորում:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ռեֆերենտ**

**Ջուլիետա Բաղդասարյան**
**09.12.2016թ.**